գայից վանական դպրոցին՝ օժանդակութեամբ վանահօրն Սաղիանի վանից՝ որ նախագահէ Հոգաբարձութեան, որպէս զի Տեառն յաջողութեամբ յառաջիկայ սեպտեմբեր ամսեանն բացցի դպրոցն համաձայն կանոնադրութեան և շարունակեսցի ուսումն դասուց։

Յաւելում ի գիտութիւն Ձեր և զայս՝ թէ ըստ կանոնադրութեան յանդամոց Հոգաբարձութեանդ երկուքն պարտին գըտանել այդր ի Բագու քաղաքի՝ այն է մին դուք էք, և միւսն պ. Գրիգորն Ասլանեանց, և ի միւսոյն՝ մին ունի գտանել ի Շամախի, մին պարտի լինել քահանայն Սաղիան գեղջ; իսկ նախագահն միշտ ունի լինել վանահայրն այնր վանից։

Ապա՝ լսելով որ բարձրապատիւ Մակար վարդապետը (ապա եպիսկոպոս) Շուշի քաղաքում անգործ և անպաշտօն մնալով՝ կարօտ է ռօճկի, ուստի գրութեամբս ի 1 մայիսի հմր. 148, Վեհ. Կաթուղիկոսի տնօրէնութեան մասին՝ յայտնելով նորան՝ հրաւիրեցի գալ և աջակցել ինձ ազգային այս կարեւոր գործը յառաջ տանելոյ՝ միանգամայն խոստանալով և ի տարին 400 ռուբլի ռօճիկ վճարել նորան։

Եւ բարձրապատիւ Մակար վարդապետից համաձայնութեան գրութիւն ստանալով՝ նախ ի 10 մայիսի 1888 թիւ 1. Շուշիից, երկրորդ ի 18 մայիսի Նելախից, երրորդ ի 14 յունիսի ճամբարակից և չորրորդ ի 17 յունիսի Տփխիսից, և նորա վերջին գրութեան համաձայն ուղարկելով յ30 յունիսի հմ. 177, գրութեանս հետ 30 մանէթ ճանապարհածախք Տփխիսից ցՍաղիան՝ ուստի միամտվեցայ և սպասեցի նորա գալստեանն։

Բարձրապատիւ Մակար վարդապետն օգոստոսի վերջերումն եկաւ հասաւ վանքը. նոյնպէս և հրաւիրուած Ռուսաց լեզուի ուսուցիչ պ. Սահակն Տէր Գրիգորեանց եկաւ հասաւ, որք և սկսեցին դպրոցական գործի վրայ պարապել։ Եւ որպէս զի իւրաքանչիւր գործավար իւր գործը ճանաչէ և ըստ այնմ վարուի։ Գրեցի իրրեւ հրահանգութիւն սապէս բարձրապատիւ Մակար վարդապետին ի 1 սեպտ. 1888 հմ. 231. նոյնպէս և վանահօրն ի նոյն թիւ հմ. 232 և դանձապահ Սահակ քահանային հմ. 233, միայն յանուն Մակար վարդապետի գը-